ՎԱՆ-ՏՈՍՊ*)

II

Վան-Տոսպ գաւառի, որպէս և Վանայ վիլայէթի կուսակալանիստ կենտրոնն է Վանը, 38°,30 «հիւս. լայնութեան և 43°,18» արևելեան երկարութեան տակ։ Հին Տուշպան **). հին, նախնի ընիկների, որպէս և տեղական—վանեան արձանագրութիւնների Բիայնան ***) (biaina), որպէս և Շամիրամակերտ, որ ըստ հայկական աւանդութեան****) նորոգուելով ինչ որ Վան թագաւորից, Մեծն-Ալէքսանդրի ժամանակակից IV դարում, ստանում է նրանից իր անուան վերջնական ձևակերպութիւնը։ Վանը, արևելքի ամենագեղեցիկ դրախտներից մէկը, գլխաւորը, արժանի է ամբողջովին այն թիւրքական առածին, որ ասում է. «դիւնիադա Վան, ախիրէթդէ իման» (Վանը այս աշխարհումս, իսկ հանդերձելումն՝ դրախտը)։ Տարածւում է ծովի արևելեան ափի վրայ նրանից 2 անգլ. մղոն (3 վերստ) հեռաւորութեամբ Վանայ ընդարձակ և տափարակ դաշտի մէջ տեղում, գեղեցիկ դիրքով և լայնածաւալ նստուածքով։

Քաղաքը բաժանւում է երկու գլխաւոր մասերի, որոնցից

---

*) Տես «Մուրճ» № 6։

**) Ինչպէս անուանում է ճշտութեամբ Պղամէոս՝ «Θωσπία». Աշխարհագր. V-13 Pr. 7, 19, և մեր Խորենացին. III-35։

***) Բիայնա ինչպէս երևում է՝ Տոսպիտիսի մայրաքաղաքի տոհմային անունն է, ըստ որում այդ յորջորջումը գտնում ենք միայն վանեան, այսպէս կոչուած՝ հին-հայկական արձանագրութիւնների մէջ, իսկ Ասորական բևեռագիրների մէջ դրա փոխարէն գտնում ենք «մայրաքաղաք Ուրարտուի», որ փոխադարձաբար վանեան արձանագրութիւնների մէջ ընաւ չի գտնւում. հետաքրքիրն այն է, որ Վան քաղաքի հին Տուշպա անունը այժմ անցել է ամբողջ գաւառին, և գաւառի հին անունը՝ Իրան-Վանը այժմ քաղաքին է տրւում, ինչպէս նկատել է A. H. Sayce.

****) Մով. Խոր. I-ԼԱ.

իւրաքանչիւրը տարածւում է մի-մի քարաժայռերի ստորոտ։ Բուն քաղաքի, որին կարելի է Բերդաքաղաք էլ անուանել, հիւսիսակողմը դաշտից ուղղաձիգ բարձրանում է մի քարաժայռ որձաքարից, Վանայ հռչակաւոր բերդը, նրա ամրոցը կամ միջնաբերդը 100 մետր բարձրութեամբ և 1650 մետր երկարութեամբ արևելքից արևմուտք երկարութեամբ։ Քարաժայռը հարաւից բոլորովին անմատչելի է և ահաւոր, իսկ հիւսիսից թոյլ պարիսպներով ամրացած որպէս թէ։ Բերդին մէջ, ուր բարձրանում են արևմտ. կողմից քարէ սանդուխներով, կան բազմաթիւ քարէ արուեստական աստիճաններ, 7—8 հատ զանազան մեծութեամբ թէ բնական և թէ յատկապէս փորուած քարայրներ, դալլերէաներ, նեղ անցքեր, որոնք պատկանում են Ուրարտացոց ժամանակներին, մանաւորապէս Նրանց Արգիստիս I. հզօր, չինարար և աշխարհակալ արքային (780—755 Ն. Ք.), որպէս ցոյց են տալիս բերդի արտաքին որմերի վրայ մինչև այսօր էլ մնացած սեպաձև արձանագրութիւնները։ Այժմ կան նոյնպէս թիւրք զօրքերի մի պահականոց, մի հին եկեղեցի ս. Բարդուղիմէոսի անունով, այժմ մզկիթի փոխուած, և մի մթերանոց (դաբօ)։ Այս քարաժայռի վրայ գտնուող բազմաթիւ բևեռագիր արձանագրութիւններից աչքի է ընկնում մասնաւորապէս մէկը բերդին հարաւային լերկ երեսում, գետնից մօտ 50 մետր անմատչելի բարձրութեան վրայ քանդակուած *), երեք տախտակներով, իւրաքանչիւրը 27 տող, եռալեզուական է (պարսկակ. բաբելոնակ. ելամական), որպէս Պիսհիդոնի յայտնի արձանագրութիւն, և նրա նման վերաբերում է Դարեհի որդի Քսերքսեսին (V-րդ դարում Ն. Ք.) և նրա գործերին։

Բերդը իբրև բնական պատուար պաշտպանում է Բէրդաքաղաքը հիւսիսային ձմեռուայ սառնամանիքից. իսկ ընդհակառակն ամառնային արևից տաքացած այդ վիթխարի քարէ զանգուածը սփռում է իր սնտանելի ջեռուցիչ ջերմութիւնը քաղաքի վրայ ամբողջ այդ եղանակի տևողութեան միջոցին։

---

*) Թէ ինչպէս է գրուել գետնից այդպիսի ահաւոր բարձրութեան վրայ եղող արձանագրութիւնը—այդ մասին զանազան հաւանական և անհաւանական ենթադրութիւններ կան. իսկ ինչ վերաբերում է դրա ընթերցման, դրա համար հարկաւոր է անշուշտ բարձրանալ Բերդաքաղաքի մերձակայ մզկիթների աշտարակներից մէկի վրայ և նայել հեռադիտակով, որպէս արել է առաջին անգամ գերման գիտնական. երիտասարդ Էդ. Ջուլց, որ Վանայ արևելակողմ Սալախանէ գիւղի մօտ գտնուող «Աշրատ Դարկա» կոչուած արձանագրութեան հետազօտութեան շարունակած միջոցին սպանուում է Ջուլամերիկ գաւառի քիւրդ ցեղապետից (1829 թ.)։ Քիչ մնաց, որ նոյն վիճակին ենթարկուէր մի քանի տարի առաջ (1898-ին) գիտնական. Բէլկ. Սիփան լերան ստորոտներ։

Ռազմական մեծ կարևորութիւն ունեցող այդ բնական ամրոցի հարաւային անմիջական ստորոտը տարածւում է Բերդաքաղաքը, որ քաղաքամէջ էլ է կոչւում, շրջապատուած է կրկնակի ժանիքաձև հողէ պարիսպներով, և բազմաթիւ աշտարակներով. այս պարիսպները, որոնք իրանց ներկայ կիսաւեր վիճակով մասամբ կորցրել են իրանց ռազմական նշանակութիւնը, արևելեան, հարաւ. և արևմտեան կողմից շրջապատելով քաղաքը միանում են Բերդի արևելեան և արևմտ. ծայրերին։ Պարիսպները արտաքին կողմից շրջապատուած են խրամներով՝ փորուած 1678 թ. թիւրք Օսման փաշայի օրով, թշնամիներից պաշտպանուելու համար։

Բերդաքաղաքը ունի 3 գլխաւոր դռներ։—Արևելեանն կոչւում է Թաւրէզ Քափու (դուռ), հարաւայինն՝ Օրթա Քափու, արևմտեանն՝ Իսկալի Դարկախ (նաւահանգիստի դուռ), Սւանց նաւահանգստի կողմն ընկած լինելու համար։

Բերդաքաղաքումն է թիւրք կառավարութեան վալիի (նահանգապետ) պաշտօնատեղին—սարայն և գլխաւոր շէնքերը, մի ընդարձակ ղշլա (զօրանոց), ջէոպախանէ (մթերանոց զէնքի նայլն), ամբարներ, բաղնիքներ, ջամիներ (moschée), որոնց մի քանիսը մինարէթներ ունին արաբական տիրապետութեան ժամանակներից մնացած, ոմանք էլ քայքայուած, և հայկական մի մեծ բազար—պարսկակ. բազարների նման, օր. Ուրմիոյ, Հին-Նախիջևանի շուկաները—2000-ից աւելի կրպակներով, և 500-ից աւելի բնակութեան տներ, որոնք հայերին են պատկանում ի բաց առեալ թիւրքերի բնակութիւններից. Բերդաքաղաքում հայերը ունին եօթն եկեղեցիներ իրանց սեփական քահանայական դասով. 1) ս. Նշան կամ Էջմիածին կենտրոնական տաճարն է, ուր պահւում է 1717 թուականից ի վեր Վարագայ ս. Նշանը Հռիփսիմէի կրծքի խաչափայտը համարուած. այս եկեղեցուն կից է հայոց առաջնորդարանը, խարխուլ և անկերպարան մի շինութեան մէջ*); 2) Տիրամէր եկեղ. ունի տղայոց ուսումնարան, 3) ս. Պօղոս եկեղեցի, 4) ս. Վարդան*) եկեղեցի, 5) ս. Ծիրանաւոր, 6) ս. Սահակ, 7) ս. Ստեփաննոս**) եկեղեցիներ։

Բերդաքաղաքի տները շատ փոքր են և անկարգ, կարծես

*) Այժմ մի նոր առաջնորդարան շինելու ջանքերի մէջ են վանեցիք։

*) Բերդի ճիշտ ստորոտում մի փոքր և գեղեցիկ եկեղեցի է յանուն քաջին Վարդանայ Մամիկոնեանի, նորոգուել է մի քանի անգամներ 1659 թ. ձեռամբ Խոջա-Ամիրին քարաշար, և 1744-ին Գարասէֆէրենց նշանաւոր տնից Ալիշան աղի ձեռամբ։

**) Նորոգուել է 1710-ին Խոջա-Վարդանի ձեռամբ։

միմիանց վրայ ընկած, չատ քիչերը միայն ունին փոքրիկ պարտէզիկներ մի քանի փոքրիկ ածուներով (մարգ)։ Փողոցները չափազանց նեղլիկ են, այնպէս որ ձմեռ ժամանակ տների տանիքներից թափուած ձներից գոյացած բլրակների վրայից պիտի պարտաւորուի մարդս ընթանալ փողոցով անցնելիս։ Բերդաքաղաքի արևմտակողմը բերդի անմիջական ստորոտը միայն գտնուում է մի մեծ այգի պտղատու ծառաստաններով և բուսականութեամբ ծածկուած Խորխոռ անունով, որը ոռոգուում է բերդի տակից բղխող բաւականին յորդառատ մի աղբիւրով. բացի սրանից Բերդաքաղաքում կան ուրիշ աղբերակներ էլ, որոնք ինչպէս և 3—4 տաճկ. արշին միայն խորութիւն ունեցող ջրհորի ջրերը անհամ են և լեղի, գուցէ ծովակի մերձաւորութեան պատճառաւ։

Բուն քաղաքի, կամ որպէս անուանեցինք՝ Բերդաքաղաքի ճիշտ արևելակողմը, միայն կէս մղոն (3/4 վերստ) երկարութեամբ հայկական մի հին գերեզմանոցով բաժանուած՝ տարածուում է Այգեստան կամ Էգէստար ըստ տեղացոց (Թիւրք. Բաղլար), Վան քաղաքի ամենամեծ և ընդարձակ մասը, որ պարիսպներ չ՚ունի սակայն։ Քաղաքի այս մասումն է գտնուում 5000 տները Վանի բնակչութեան՝ թէ հայ և թէ թիւրք. նրանցից իւրաքանչիւրը ունի մի մեծ այգի խաղողի «թիերով» և պտղատու ծառերով, որոնց թիւը 3000-ից անց է։ Բացի տներին կից եղող այգիներից Այգեստանի արևելեան ծայրում չինութիւններից հեռու կայ «Նորատունկներ» կոչուած խաղողի և ուրիշ պտղատու այգիների մի ընդարձակ շարք իւր քէչկով (հնձան), ուր ապրում են պահապանները միայն կամ քաղաքացիք ամրան ժամանակ։

Այգեստանի տները, բաղդատմամբ Բերդաքաղաքի տների, են ընդարձակ, վայելուչ և բնակութեան յարմարաւոր մի քանի յարկերով և պատշգամբներով, չը նայած, որ քարը հաղագիւտ լինելու համար չէնքերը չինուում են հում աղիւսներից։

Այգեստանը եռանկիւնի ձև ունի, արևելեան ամենագեղեցիկ և ընդարձակ մասը բռնել են հայերը իրանց այգիներով, իսկ արևմտեանն՝ Թուրք ազգաբնակութիւնն, ի բաց առեալ Հայկավանք թաղը, ուր հայերը ունին մի հին քարաշէն եկեղեցի Հայկավանից ս. Աստուածածին*) անունով։ Այգեստանի մնացած հայաբնակ թաղերը բաժանուում են չորս գլխաւոր մա-

*) Հայկավանուց եկեղեցւոյ նորոգութիւնը յիշուում է 1739 թ. Աղթամարի Նիկողայոս կաթողիկոսի ձեռքով, վանեցի Տէվկանց Նշանաւոր Յարութիւն քահանայի ժողովարարութեամբ։

սերի չորս եկեղեցիների համեմատ, որոնք 40-50 տարիներ առաջ վոքրիկ մատուռներ են եղել կամ տաղաւարիկներ, ինչպէս յորջորջում էին տեղացիք, և որոնք ապա ժողովրդի տակաւ բազմամարդութեան պատճառաւ ընդարձակուել են և նորոգուել են ըստ կարգին։ Դրանցից ամենագլխաւոր և կենտրոնական թաղի եկեղեցին է 1) Նորաշէնու եկեղեցին յանուն ս. Աստուածածնի հիմնարկուած անցեալ դարու 40-ական թուականների վերջերին Սաֆէմ-Խաչօենց ազնուական տոհմից Սարգիս աղայի և ոմն Նիկողայոս հէքիմբաշու (բժշկապետ) ջանքերով։ Եկեղեցին 600-ից աւելի ծուխ ունի. աչքի ընկնող հարուստ կալուածներ և եկամուտի առատ աղբիւրներ չունի թէև, բայց իր ծուխերի առատաձեռն նուէրներով և եկեղեցական տուրքերով կարողանում է պահպանել իր պայծառութիւնը, որպէս և իր ծոցին մէջ դտնուող ծխական վարժարանը, որ միշտ բարեկարգ է եղել և պիտանի։

2) Արարք ընդարձակ և փառաւոր եկեղեցին յանուն ս. Աստուածածնի, Այգեստանի հարաւային ծայրում. նորոգութիւնը յիշատակւում է մի քանի անգամներով, առաջին անգամ 1646 թ. Աւանցի Կիրակոս չինարար եպիսկոպոսի ձեռքով, որ միանգամայն և Վարագայ վանքի վանահայր է եղել. Կիրակոսը իր բազմաթիւ չինութիւնները կատարում է Տիրատուր կոչուած հմուտ մի ճարտարապետի ձեռքով, որ Վանայ Տրդատ ճարտարապետն է համարւում։ Ապա 1763-ին թ. ապա 1806-ին. և վերջին անգամ հորովանցի Մելիքեան Պօղոս եպիսկոպոսի ձեռամբ 1884 թ. կիսով չափ քարից և մնացեալ անթուրծ աղիւսից։ Արարք եկեղեցին ունի 900-ից աւելի ծուխ, որոնք եկեղեցւոյն շուրջն են բնակւում։ Իրան է պատկանում եկեղեցւոյն կից հիւսիսային ընդարձակ հրապարակի վրայ, որ կիւրակէ օրերում Վան քաղաքի տօնավաճառի դեր էլ է կատարում՝—100-ից աւելի խանութները, փուռեր և ձիթահան, որոնք բերում են մօտաւորապէս 300 օսմ. լիրայի եկամուտ, որով ղլխաւորաբար պահւում է իր ծխական վարժարանը մի փառաւոր երկյարկանի չինութեան մէջ։

3) Ցանկոյսների եկեղեցին, պստիկ տաճար Աստուածածին կոչուած, քաղաքի հիւս. արեւելեան ծայրում, մի գեղեցիկ ձորակի, որի միջով խիտ տնկուած ծառերի արանքից անցնում է Ցանկոյսների գետը, հիւսիսային ափին վրայ չինուած, տասն դարեան հնութիւնով։ Ցանկոյսներու տաճարը որ երբեմն վանք է եղել, և որի չինութեան պատճառը աւանդութիւնն համարում է VII-րդ դարում ինչ-որ ճգնաւորի տեսած տաններկուլուսեղէն սիւներից մէկի իր վրայ իջնելը, նորոգուել է 1762 թ.։

Քաղաքի ընդարձակուելով և ծուխերի բազմանալով կարիք է զգացուում մեծացնելու, և այդ գործին ձեռնարկողն է լինում նոյն եկեղեցու ծուխերից Թէրլէմէզեան նշանաւոր տոհմից Մհ. Ալխաս աղա կոչուածը, որ 1849 թ. մեծացնում է եկեղեցու յաւելուած հողէ մասը և նորոգում. 1896 թ. աւերումները ջնջում են բոլորովին Ալխաս աղայի յիշատակները, որի փոխարէն նոյն եկեղեցու բարեպաշտ թաղեցիք կառուցանում են այս մի քանի տարուայ ընթացքում մի հոյակապ քարաշաղ եկեղեցի լաւ ճարտարապետութեամբ, սրա հետ միասին մոխիրների միջից վերականգնուում է և նրա վարժարանը։

4) Ս. Յակոբ եկեղեցին, յանուն Մծբնայի Յակոբ հայրապետի, քաղաքի հիւս. ծայրում թիւրքաբնակ թաղերով շրջապատուած, երեք տարի առաջ նորոգուեցաւ հիմքից, Յանկոյսների եկեղեցու վիճակին ենթարկուած լինելուն համար։ Ունի իր խրճուկ ուսումնարանը։

Որպէս բուն քաղաքի, Բերդաքաղաքի, նմանապէս և Այգեստանի հիւսիսակողմ Յանկոյսներ եկեղեցու անմիջական հիւսիսակողմ ձգուում է արևելքից արևմուտք երկարութեամբ կըրաքարից մի հսկայ քարաժայռ, Թոփրաղ-Գալէ (հողաբերդ) կամ Զմրմ-Մաղարա կոչուած, որ իր բարձրութիւնով, բնական և արուեստական մեծ և փոքր քարայրներով, խոշոր անսովոր մեծութեամբ աղիւսներից չարուած չինութեանց որմերի մնացորդներով, 40—50 աստիճան ունեցող, շատ անգամ էլ անվերջ՝ դէպի անդունդը տանող քարեայ արուեստական սանդուխներով, *) հսկայ քառակուսի տաշուած քարերից չինուած աւաղանաձև կազմածներով մնացել է միշտ և կը մնայ մի խորհրդաւոր և սպշեցուցիչ հնութիւն, վանեցու, հետաքրքիր այցելուի և գիտնական հնախոյզի համար իսկ։

Անցեալ դարու սկզբից մինչև այժմ էլ այդ հինաւուրց ամրոցը ունեցել է իր բազմաթիւ խուզարկողները, նրա բազմադարեան խաղաղութեան վերջին վրդովողը եղել են գերման Բէլկ և Լէման գիտնականները որոնք իրանց խուզարկութեանց արդիւնքը սկսել են պարբերաբար հրատարակել Գերմանիայում **)։ Բազմաթիւ խուզարկութիւնների ժամանակ դուրս են

*) Զանազան առասպելներ են պատմում վանեցիք այն ստորերկրեայ աշխարհների մասին, ուր առաջնորդում են այդ սանդուխները—այդտեղ, այդ խաւար տարտարոսի միջով անցնում է ինչ որ Գայլ գետը, որի ափն պատում է Զարխի-Ֆալակը—աշխարհի անիւը, որ երկրագնդի ճակատագիրն է որոշում։

**) Beitrage zur alten Geographie und Geschichte Vorderasiens von D-r Waldemar Belk. Leipzig 1901. Heft I. II. և «Հանդէս Ամսօրեայ»... №№ 7—11 թարգմանութիւն Von der Deutschen Armenischen Expedition, W. Z. K. M. XIV, 1900. № 1—2; 5. 1—4. G. H. Lehmann։

եկել հողի տակից հսկայ կարասներ, մի առանձին տեսակի լաւ չինուած և թրձուած, փարչեր, հողէ ամաններ, բրոնզից կուռքեր, վահաններ արձանագրութիւններով, ժանգոտած նետերի բեկորներ, նիզակներ, հին փողեր, գլխաւորաբար Ուրարտեան հարստութեան ժամանակներից մնացած։

Տեղացի ժողովուրդը խօսում է ինչ-որ ստորերկրայ գաղտնի անցքի մասին որ յարաբերութեան մէջ է դնում Թոփրաք-Գալէն Վանայ միջնաբերդի հետ, որ նրանից մի ժամուայ հեռաւորութիւն ունի, մօտ 4 մղոն (6 վերստ). այս բանի հաւանականութեան մի քանի նշաններ են երևում։

Թոփրաք-Գալէի շարունակութեան վրայ դէպի արևմուտք գտնւում է Սիւ-քուայ կոչուած քարաբլուրը որին կից Ակոփի կոչուած թրքաբնակ թաղին, ուր կայ մի հրաշագործ մատուռ յանուն ս. Աստուածածնի՝ հիւսիսակողմը մի քարաժայռի կըրծքի վրայ 3—4 աստիճաններով ընկած կայ մի հսկայ կեղծ դուռ Մհերի-դուռ կոչուած. բարձրութիւնը 5 և լայնութիւնը 2 մէտր. երկու կողմերը կան նստարաններ. շրջապատող աստիճանների լայնութիւնը է 25—30 սանտիմ. դուռը ծածկուած է բևեռաձև արձանագրութիւններով կրկնագիր տեսակից (en double), թէև մի քանի տեղ եղծուած՝ դիտմամբ տրուած մուրճի հարուածներով. պատմում է վանեան հին թագաւորներից Ռուզաս I-ի (730—714 Ն. Ք.) Խալդիս (Անահիտ ?) դիցուհուն արած զոհաբերութիւնների մասին, որ ընդհանրապէս հանդիսանում է մի թանգագին աղբիւր խալդեանց կրօնի պանթէոնի ուսումնասիրութեան համար։ Մհերի՝ այս խորհրդաւոր կեղծ դրան մասին ժողովուրդը պատմում է զանազան աւանդութիւններ իրանց վարիանտներով. հետաքրքիր է որ տարուան մէջ մի անգամ, համբարձման տօնի գիշերը կը բացուի ինքնիրան և ներկայ եղող և ներս մտնող բաղդաւորին կը տայ ցանկացածը *)։

Ամենից բազմամարդ և գլխաւոր գիւղն է Աւանց նաւահանգիստը ծովի արևելեան ափի վրայ քաղաքից 2 մղոն հեռաւորութեամբ, գեղեցիկ դիրքով և ծառազարդ հայաբնակ գիւղ է, ունի մօտ 500 տուն բնակչութիւն, որոյ մի մեծ մասը կազմում են մերձակայ գաւառներից մասնաւորապէս Մոկսի Ողիմ կո-

*) Այդ մասին եղած ժողովրդի մէջ մի զրոյց պատմում է որ մի հովիւ բաղդ է ունենում դրան բացուած ժամանակ մէջը մտնել և իր ցանկացած թանկագին իրեղէնները ոսկի և ադամանդ հաւաքել և դուրս գալ. սակայն այդ երջանիկ մահկանացուն երբ իր հովւական գաւազանը ներս թողած լինելու համար կը-վերադառնայ բերելու, ժամանակը լրացած լինելով դուռը կը փակուի խեղճի վրայ, որից յետոյ լսւում է միայն նրա աղիողորմ ձայնի հառաչանքները։

չուած գիւղի գաղթական բնակիչները, որոնք անցեալ դարում ազատանել են այստեղ քիւրդական անսանձ հարստահարութիւններից փախչելով։ Գիւղն ունէր մի եկեղեցի յանուն ս. Յովհաննէսի շինուած ոմն Աղաւնեան Մարտիրոսի ձեռամբ, որ մի դար մօտաւորապէս առաջ կուլ է գնացել աճող ծովակի մակընթացութեան. այժմեան եկեղեցին (դարձեալ ս. Յովհաննէս) ծովի ափից բաւական հեռաւորութիւն ունի։ Գիւղը պահում է մի աղքատիկ նախակրթարան, որ կառավարւում է ս. Յովհաննէս եկեղեցւոյ հասոյթներով, որոնց գլխաւորն է նաւերի վրայ շինութեանց առթիւ ստացած տրոց մի որոշ գումար։

Բնակիչների վարք ու բարքը նախանձելի աստիճանի վրայ չէ գտնւում, հոչակուած են նոյնպէս հայհոյելու շնորհքով, որպէս աշտարակեցիք Կովկասում։

Լէզկ.—գտնւում է Աւանց նաւահանգստից 8 մղոն հեռաւորութեամբ դէպի հիւս. մի բլրակի լանջերի վրայ ծովահայեաց հրաշալի դիրքով, ունենալով իր առաջ Վան-Տոսպի ընդարձակ դաշտը իր գիւղերով և զեղեցիկ տեսարանով։ Բնակիչների մեծ մասը հայ են (մօտ 180 տուն) աղքատ վիճակով, որոնք ունին մի փոքրիկ եկեղեցի յանուն ս. Աստուածածնի։ Գիւղի մէջ տեղում ցցուած կայ մի բնական քարաժայռ. իսկ Լէզկի բլրակի գագաթին գտնւում է մի փոքրիկ մատուռ Ամենափրկիչ անունով, առ որ ուխտ են գնում—«Կարմիր-Կիւրակէին»՝ երրորդ կիւրակին Զատկից յետոյ—շրջակայ գիւղերի, նոյնիսկ քաղաքի բնակիչներից մեծ բազմութիւնով։ Ըստ տեղական աւանդութեան Ամենափրկչի տեղում հին ժամանակ եղել է կըռոց մեհեան, գուցէ Առլէզ կուռքերի *)։

Շաղբաղի.—ընկնում է Լէզկի հիւս.-արեւելակողմ դէպի Արճակ տանող կարաւանի ճանապարհի վրայ գեղեցիկ դիրքով և ընդարձակ այգիներով. բնակչութեան մեծամասնութիւնը հայեր են (200 տուն). թիւրքերը շատ չնչին տոկոս են կազմում Շաղբաղու աղգաբնակութեան։ Հայերը գիւղում մի եկեղեցի ունին, կառուցուած XVII-րդ դարու կէսերին։ Հետաքրքրքիրն այն է այս գիւղի համար որ մի ժամանակից իվեր լոյս աչխարհ է ընկել մի թիւրք չէյխ, որ բնակւում է Վանայ բերդին հիւս. ստորոտ Շահբաղուց մէկ ժամուայ ճանապարհ հեռի. այդ գիւ մոլլան Շաղբաղի=Շէյխ-բաղի (չէյխի այգի) ստուգաբանելով՝ բռնութեան ոյժով կամենում է այդ գիւղի հայ բնակիչներին պատկանող կալուածները գրաւել և ժամանակի

*) Մ. Խոր. I—ԺԵ.

հանգամանքներից և տիրող կառավարութեան իր համար նը-պաստաւոր տրամադրութիւնից երես առած՝ դատարանի է դի-մել իր յիմար ապօրէնի գրաւումները վաւերացնելու համար։ Ապուշ պէտք է լինել այժմուանից զուշակել չը կարողանալու համար որ Օսմանեան արդարադատ կառավարութեան նոյնքան արդարադատ դատարանը նրա երևակայական պահանջն և իրա-ւունքները կը ճանաչի չուտով։

Սղգա.—Թոփրագ-Գալէի արևելեան ստորոտ Թէալէմէ-զի-փոս կոչուած մի գեղեցիկ ծառաչատ ձորակի, որի միջով անցնում է մի յորդ ջուր, որ պատեցնում է մի քանի ջրաղաց-ներ՝ երկու ափերի վրայ տարածւում է Սղգա հայաբակ գիւղը, 100 տուն բնակիչներով և մի կոկիկ եկեղեցւով որ անցեալ տա-րի վերաշինուեցաւ. Սղգայում այգիներ քիչ կան։

Շուշանց.—ընկնում է Շուշանից լերան արևմտեան ըս-տորոտ՝ Թեղի կոչուած ձորակին բերանը. այս զուտ հայաբնակ գիւղը կոչւում է ըստ աւանդութեան Արծրունեաց Սենեքերիմ թագաւորի Շուշանիկ աղջկայ անունով, ուր է և իր գերեզման-ը. բնակարանները չինուած են բերդի տեսք ունեցող մի քա-րաժայռի ստորոտում. Շուշանց գիւղը ունի ընդարձակ հորի-զոն. նրա առաջ փռուած է ծովը իր ամբողջութեամբ և Վանայ դաշտը Վան քաղաքի և այգեստանների հրաշալի տեսարանով։ Ունի մի հին եկեղեցի յանուն ս. Գէորգի, որի վերջնական նորոգութիւնը եղել է XVIII-րդ դարու սկզբին։ Բնակիչները 80 տուն են. գիւղի ստորոտը կան մի քանի խաղողի այգիներ, ո-րոնք քաղաքացիների են պատկանում գլխաւորապէս. քաղցրա-համ և սառնորակ աղբիւրներ ունի։ Շուշանց հեռի է քաղաքի այգեստաններից 4 մղոն։

Նոր-Գեղ.—Շուշանց գիւղի դէպի արևելահարաւ համա-նուն կէտուկի ստորոտ ընկնում է Նոր-Գեղ հայաբնակ գիւղը 200 տուն հայ բնակիչներով. ունի մի եկեղեցի. գիւղի մէջ-տեղից անցնում է մի յորդ առու որ լցուցանում է Նոր-գեղա-ցիների ջրի կարիքը։ Նոր-գեղացիք աշխոյժ աշխատասէր և ընդունակ ժողովուրդ են։

Բերդակ և Սեւակրակ գիւղերը ընկնում են ս. Խաչի սարի վրայ Նոր գիւղից դէպի հարաւ-արևմուտք. առաջինը չի-նուած է մի գեղեցիկ ձորակի բերան, 80 տուն բնակիչ ունի, եկեղեցի XVII դարու վերջերին չինուած, և մի ուսումնարան եկեղեցու բակում։ Սրան մօտ է Սեւակրակ գիւղը 50 տուն բը-նակիչներով։

Կուռուլաշ գիւղը տարածւում է Բերդակից հիւսիս, Վանայ դաշտի հարաւը եղերող բլրակի ստորոտը. աչքի է ընկ-

նում իր այգիներով (խաղողի), ջրերի առատութեամբ, ջրաղացներով և գեղեցիկ տեսարանով. քաղաքից հաղիւ 5 մղոն հեռաւորութեամբ դէպի նրա հարաւ-արևելքը։ 100 տուն հայ բնակիչ ունի, մի եկեղեցի յանուն ս. Ստեփաննոսի Նախավկայինն. եկեղեցու բակում ունի և գիւղական խղճուկ նախակրթարան ձմեռուայ եղանակի համար. ըստ որում միւս եղանակներին աշակերտները պարտաւորուած են լինում երկրագործ ծնողներին օգնել իրանց աշխատութիւնների մէջ։

Կենդանանց.—գիւղը գտնւում է Կուռուպաշից դէպի արևմուտք 35-40 տուն հայ բնակիչներով և մի եկեղեցիով՝ ս. Աստուածածին, որի Քօչհան կոչուած աւետարանին ուխտ են գնում բազմաթիւ ցաւագարներ, առաւելապէս յօդացաւ ունեցողները. այս գիւղին մերձ է մի մեծ քարահանք, որ տալիս է չինութեան և ջրաղացների յարմար քարեր։

Ծվոտան գիւղը Վանայ դաշտի հարաւ. ծայրում բլրակի կրծքին, որ նայում է դէպի ծով նրանից երկու մղոն հեռաւորութեամբ. զարգարուած է պտղատու մեծ այգիներով. 95 տուն հայ բնակիչ ունի այս գիւղը. մի եկեղեցի XIII դարու գործ, և գիւղակ. մի փոքրիկ ուսումնարան։

Արտամէդ գիւղաքաղաք Վանայ ծովակին հարաւ-արևելեան ափին վրայ, Վան-Տոսպի ամենագեղեցիկ վայրերից մէկը գեղեցկադիր տեսարաններով, ծառազարդ հովանիներով հրապուրել է և մինչև այժմս էլ քաշում է դէպի իրան նրա տիրապետողներին՝ ծառայելով իբրև ամենայարմար ամարանոց նրանց համար իր բնական յարմարութիւններով։ Մինչև իսկ Խորենացին կամեցել է որ իր հերոսներից շատերը սրա ընծայած հրապոյրները վայելեն անպատճառ. ըստ որում սրա մօտ լողանալիս կորցնում է և իր գիւթական «յաւուրթն ու յուլունքը» տուփոտ դշխոյն Ասորեստանի *), և Արտաշէս Արշակունին սրա հովանիների առանձնութեան մէջն է անցկացնում իր երջանիկ մեղրալուսին ընդ չքնաղագեղ օրիորդին Ալանայ**)։ Այժմու մեղի տիրապետողներին էլ չէ զլանում այդ հինաւուրց Արտամէդը, բայց միշտ էլ նոր և գեղեցիկ, իր աքանչելի սիւքն ու դալարիքը։ Նշանաւոր են թէ Վանում և թէ շրջակայքում համբաւուած և սիրելի սրա պտուղները, որոնցից Արտամիդու «դէլասլի» խնձորին իր բանաստեղծական գողտրիկ տողերից մի քանիսը նուիրել է Հ. Գ. Սրուանձտեանը ***) արժա-

*) Մովս. Խոր. I. ԺԶ.
**) Թովմա Արծրունի. Կ.-Պոլիս, 1852, եր. 53. 57.
***) Մանանայ. Կ. Պոլիս. 1876, եր. 100։

ժանապէս։ Այժմ Արտամէդի տների թիւը հասնում է 500-ի է, որոնք Ոստան տանող մեծ պողոտայով բաժանուել են երկու մասի՝ ըստ բնակչութեան կազմելով թիւրքաց և հայոց թաղերը. հայերը ունին եկեղեցի։ Բացի այս եկեղեցուց որ կանգուն է մնում և ուր ժամասացութիւն է լինում՝ Արտամէդի մերձաւոր շրջականներում այստեղ և այնտեղ ցրուած կան բազմաթիւ եկեղեցիների և վանքերի մատուռների և սրբավայրերի անշուք մնացորդներ*), որոնք Արծրունեաց հարստութեան փառաւոր անցեալն են վերյուշում ականատեսի մտքին մէջ և զանազան տխուր և ուրախ խորհրդածութիւնների մղում նրան։ Այս գիւղերից զատ Վան-Տոսպի մնացեալ գիւղերից արժէ յիշատակել Կողպանց, 35 տուն հայ բնակչով, մի եկեղեցի առանց քահանայի, Ցարման-Գիւղը, 45 տուն հայ բնակչով, մի փոքր եկեղեցի մի քահանայով, Ոսկեբակ 30 տուն հայ բնակչով, մի փոքր եկեղեցի և մի քահանայ, Զարանց, 40 տուն հայ, մի եկեղեցի և մի քահանայ, Սիւան, 60 տուն հայ բնակիչ, մի եկ. և մի քահանայ, Համզկերտ, 30 տուն հայ բնակիչ, մի եկեղեցի և մի քահանայ, Նաբաթ, 35 տուն, մի եկեղեցի և մի քահանայ, Փառուղ, 30 տուն, մի եկեղեցի առանց քահանայի**)։ Այս մասի գիւղերը որոնք միմիանց մօտիկ հեռաւորութեամբ ցրուած են Վարագայ լերան կրծքին և փէշերին վրայ, ունեն լաւ օդ, ջուր Վարագայ սարից բղխող պաղորակ և վճիտ, զուլալ աղբիւրներ, ոմանք էլ այգիներ և ծառազարդ վայրեր՝ մեծաւ մասամբ, ինչպէս երևում է, զուրկ են հոգևոր մխիթարութիւնից և կրթութեան միջոցներից, կազմելով յետ ընկած խաւար անկիւններ, տնտեսապէս էլ աղքատ և ողորմելի վիճակով։

ԿԱՐՍԵՑԻ

(Կը շարունակուի)

---

*) Ս. Գէորգ, Ս. Սարգիս, Ս. Ստեփանոս. Ս. Զմաւոն և այլն։

**) Զրուանդանց, Զորավանց—Հին Զորավանք հայաբնակ մեծ գիւղը և մեր մի քանի կաթողիկոսների աթոռանիստ, հայրապետանոցը—եւ մի քանի երբեմնի հայաբնակ գիւղերը այժմ մի քանի (2-3) տուն հայ բնակիչ ունին միայն։